և Ե. թաթարք. ամենեքին մահմետականք, և թիւ նոցա աւելի քան զմիլիոն մի: — Զ. Պարսք յարևելակողմն աշխարհիս. ընդ որս Է. և Փարսիք կամ Կրակապաշտք 'ի Պաքու. — Ը. Աստրիք և Քաղդէացիք Նեստորականք 'ի Հաքեարի, և 'ի գաւառս Ուրմիոյ և Սալամասայ, յորս գոն և հռովմէականք, յանդիշատակ ժամանակաց բնակեալք 'ի լերինս անդ և քաղաքավարեալք հին օրինօք և կրօնիւք, յորս նախնիք մեծ գործեցին Քուրդք յամին 1843 և 1847 (94), այլ տակաւին թուին լինել բիւրք ինչ 'ի դժուարակոխ լերինս անդ Կորդուաց: — Թ. Եզիդիք արևապաշտք և դիւապատկարք, լեզուաւ և բարուք նմանք Քրդաց, այլ ոչ բազմաթիւք: — Ժ. Վիրք 'ի Սամսխէթ և 'ի Սամշխէ: — ԺԱ. Արաբացիք 'ի Կովկասեան գաւառս արևելից. ուր ԺԲ. Լէկք և այլ Կովկասեանք. անդ ԺԳ. և մնացորդք Աղուանից կամ Ուտիացիք, մերձակիցք Հայոց: — ԺԴ. Հրեայք սակաւք յԱխալցիխէ և 'ի Կովկաս. ոչ բազմաթիւ քան զնոսա ԺԵ. և Ցոյնք. ԺԶ. Լազիկացիք և Եգերացիք և այլք պոնտականք: — ԺԷ. Գերմանացիք իբրև 3500 ոգիք, հաստուած եկեալք յամին 1818, բնակեալք 'ի կողմանս Վրահայոց և 'ի Գանձակ: — ԺԸ. Ռուսք յիւրեանց բաժնի, և աղանդաւորք նոցա Մալեոքանք և Տոխոպորեցք 'ի կողմանս Գանձակայ: — ԺԹ. Խազախք սահմանապահք Ռուսաց. — Ի. Գնչուք և Բոշայք. յեսինքս քրիստոնեայք են կրօնիւք, լեզուաւ և բարուք հայամերձք: Արտաքոյ սոցա Եւրոպէացիք ոմանք Յէրզնռում և 'ի Դավրէժ, դեսպանութեամբ նոսեալք և եկք սակաւք: Միահամուռ թիւ սոցա, զատ 'ի հնգեցուն նախակարդեալ ազգացն՝ ոչ թուի ժամանել 'ի մի միլիոն:

31. ԱՐՈՒԵՍՏՔ. ՎԱՃԱՌՔ. — Գլխաւոր և հասարակ պարապմունն բնիկ ժողովրդեանն Հայաստանի՝ մշակութիւն է, և եկաց՝ խաշնարածութիւն. և ըստ տարազու հողագործ մարդկան՝ խոշորակեաց և սակաւապէտ է ժողովուրդն, անհարթ և անպաճոյճ. 'ի քաղաքս ևեթ գոն արուեստաւորք և վաճառականք, և արուեստք սովորականք են ոստայնանկութիւն, խալախորգութիւն, ներկարարութիւն. ընդ սոցին են և պղնձագործք, զինագործք, ոսկերիչք սակաւ, խորտկարարք, հացեփեցք, դերձակք, և այլն: Ի գլխաւոր քաղաքս գոն և սեղանաւորք, պաշտօնեայք և թարգմանք առ հիւպատս օտարազգիս և առ գաւառապետս: Ճարտար և յաջող է ազգս Հայոց յարուեստս և 'ի վաճառականութիւն և յուսմունս, այլ առաւել արտաքոյ բնիկ աշխարհին գտանին այժմ հրահանգեալքն և բարեկեցիկք: Արդասիք Ճարտարութեան հայթհայթեալք 'ի Հայս են սեկ, մուշտակ, անօթք պղնձի և երկաթոյ, զէնք, կտաւք սպիտակք և ներկածոյք, գորգ, ասուի, մետաքս, և այլն. ընդ որս առաքին 'ի վաճառ և անկազմ արդասիք երկրի, արջառ և ոչխար և պատրուճակ, ձի ընտիր, աղած ձկան, պտուղք և արմատք ներկոց և դեղոց, կիւ կամ ձուէթ, մատուտակ, գղեթոր, խաշնդեղ, գազպէ, որդան կարմիր, աղ, հայկաւ, հայքար, բորակ, իւղ կտաւատի, նաւթ, ծծումբ, կապար, պղինձ, արծաթ: Գլխաւոր շահաստանք 'ի Հայս են Էրզրում, Դավրէժ, Տիարպէքիր, Վան, Պայէզիտ, յորս ստէպ երթեւեկ առնեն կարաւանք ընդ Պարս, յորմէ գայ և աղնամաղնն հնդկաց. ընդ փոքր Ասիա՝ ուստի գան եւրոպական վաճառք. ընդ Տփխիս՝ որ մեծ շահաստան է Կովկասեան աշխարհի: Իսկ ծովեղերեայ շահաստանք և դրունք վաճառականութեան են, 'ի Պոնտոս՝ Տրապիզոն և Պաղում. Պաքու և Սալիան և Լէնքորան 'ի Կասպիականն, ընդ որ նաւեն յԱժտերխան և յափունս ուրեք Պարսից. և ասի ընդ բերան Կուրայ և Երասխայ առ խուն մի ևեթ գան նաւք. իսկ 'ի Ճորոխ նաւեն յԱրդուինայ 'ի վայր 'ի Պաղում. յԵփրատ և 'ի Տիգրիս արտաքոյ Հայաստանի լինի նաւարկութիւն 'ի ծոցն Պարսից. և 'ի մէջերկրայս լինի նաւարկութիւն ընդ ծովն Վանայ՝ 'ի Դատվանայ Բաղիշու մինչև 'ի Վան:

32. ԿՐՕՆՔ Հայոց որպէս ամենեցուն յայտնի է՝ քրիստոնէութիւն է ընդհանուր. և մեծագոյն մասն ազգիս յԱրևելեան եկեղեցւոյն է, ինքնուրոյն հովուապետօք առաջնորդեալ, որ կաթուղիկոսքն կոչին. և երեք ինքնագլուխ կաթուղիկոսք են արդ. Ա. Էջմիածնի, որ նախապատիւն և է մեծաթեմ, այլ յամին 1837 վարէ զիշխանութիւնն օժանդակութեամբ սիւնհոդոսիւն կարգելով յինքնակալէն Ռուսաց. Բ. Կաթողիկոսն է Սսայ՝ յԺԳ դարու հաստատեալ անդ և ոչ ընդհատեալ 'ի զատուցման աթոռոյն և փոխագրութեան յԷջմիածնի՝ 'ի կէս ԺԵ դարու. Գ. աթոռ է Աղթամարայ՝ 'ի ծովուն Վանայ, 'ի Ժ դարու սկզբնաւորեալ յաւուրս Գագկայ Արծրունւոյ, և իշխանութիւն նորա ձգի յարևելս և 'ի հարաւոյ ծովուն, անձուկ թեմիւ. որպէս և Սսայն չէ կարի ընդարձակ: Միւս ևս կաթողիկոս էր Աղուանից անուամբ 'ի Գանձասար, որ բարձաւ 'ի Ռուսաց յամին 1828, և աթոռն մետրապօլոյտութիւն անուանեցաւ և հաստատեցաւ 'ի Շուշի: Երկրորդ յետ կաթողիկոսացս են Պատրիարքութիւնք երկոքին, Երուսաղեմայն և Կոստանդնուպօլսոյ. որոք իշխանութիւն օժանդակեալ յազգային Եկեղեցական ժողովոյ՝ ընդարձակագոյն է քան զամենայն հովուապետացն Հայոց, տարածեալ գրեաթէ յամենայն Օսմանաստան, ունելով թեմս իբրև 50, որոց եպիսկոպոսունք յԷջմիածնայ կաթուղիկոսէն առնուն զձեռնադրութիւն. նոյնպէս և առաջնորդք Հայոց Պարսկաստանեայց, որք են արքեպիսկոպոսն Դաւրիժու և արքեպիսկոպոսն Նոր Ջուղայի առ Ասպահանաւ, ընդ որոյ իշխանութեամբ են և Հայք հնդկաստանեայք և որք 'ի Բաբելն: — Իսկ միաբանք արևմտեայ եկեղեցւոյն կամ հռովմէական ուղղափառ Հայք, դումարին իբր 'ի 160,000. և առաջնորդին 'ի Ռուսաստան՝ յուղղափառ Սիւնհոդոսէն. 'ի Պարսկաստան՝ յառաքելական նուիրակայ և պաշտօնէից. յԱւստրիա՝ 'ի հայ արքեպիսկոպոսէն Լէմպերկայ, և այլուր՝ 'ի լատին եպիսկոպոսաց. յՕսմանաստան յերկուց գլխոց, 'ի կաթուղիկոսէն Լիբանանու հաստատելոյ 'ի սկիզբն ԺԸ դարու, որ ունի թեմ զկողմանս Կիւլիկիոյ, Փ. Հայոց և զԱստրուց, և 'ի նախագահ Արքեպիսկոպոսէն Կոստանդնուպօլսոյ հաստատելոյ 'ի Ս. Գահէն Հռովմայ յամին 1831, որ ունի թեմս հինգ 'ի Հայս և 'ի